առ ի գնալ ի պատերազմ. և տէր զօրացուսցէ զնոսա. և յայս անգամին յոյս մեծ ունիմք ջախջախել զգլուխ անիծածին...։... ասեն թէ պռուշեան զամենայն երկիրն իւր փակեալ է և ոչ ումեք տայ ելևմուտ առնել. և թողեալ է միայն զմի միայն ճանապարհ. և ընդ այն անցանեն կամօք իւրովք. և զամենայն կրօնաւորսն եղեալս ընդ իշխանութեամբ իւրով, և զքահանայսն արարեալ է սօլտատս և զօրապետս։ Եւ ասեն բնակիչք Վիեննայու թէ յորմէ հետէ կայ այս թագաւորութիւնս և իշխանութիւնս տանն աւրստրայու ոչ երբէք եղեալ է այսչափ հզօր զօրութեամբ, իշխանութեամբ, փարթամութեամբ և զօրօք. և կարող է ասեն երկու և երեք հարիւր հազար զօրաց տալ ռոճիկս...։ Լուայ ևս թէ պաղատատու փաշան ինքնագլխաբար դրամ սկսեալ է հատանել։ Եւ ընդ ֆրանսըզու հաշտութիւն առնելն կարի յոյժ հաստատուն է. քանզի ասեն թէ այս թագաւորութիւն այնպիսի թագաւորութիւն մի է, որ ի զանազան ժամանակս պէս պէս փոփոխութիւն ընկալեալ է. ժամանակ մի իտալեացւոց առաջնորդութիւնն յաջողեալ է աստ. ժամանակ մի սպանիացւոց։ Ժամանակ մի ինկիլիզաց. և այժմ աստ զօրացեալ են ֆրանսըզք, վասն այսորիկ ախորժելով իւրաքանչիւրքն ֆրանսըզին արարեալ են զայս մանաւանդ, զի կայսրն զարմիւ է ֆրանսըզ...։

Ն. Ծ.

Ցամի տեառն 1756 Սեպ. 4 ի Վիեննայ — Հ. Գէորգ վրդ.

ՃՂԹ.

Նախ՝ Վիէննայի Ցիսուսեանց վրայ կը խօսուի. յետոյ կ՝անցնի մանրամասն ու լաւ տեղագրութիւն մը տալու աւստրիական մայրաքաղաքին վրայ։

Մեծապատիւ հարցդ իմոց և վարդապետաց Հ. Սիմոնին, Հ. Գաբրիէլին, Հ. Անդրեասին, Հ. Վրթանէսին, Հ. Յակոբոսին, Հ. Ներսէսին, Հ. Թարէոսին, Հ. Անտոնին, Հ. Դանիէլին, Հ. Մեսրոպին և Հ. Անանիային բազում սիրով ողջոյն և գրկախառն համբոյր։

Ըստ որում խնդրեալ էին ոմանք ի զերապատիւ հարցդ զորպիսութիւն քաղաքին Վիեննայու համառօտիւ ծանուցանել, և ըստ որում ես ևս յանձն առեալ էի, աւանիկ կարճ ի կարճոյ ձեզ Վերապատուելեացդ գրեմ։... Քաղաքս այս գրեթէ ընդ իշխանութեամբ ճիզուիթաց է, քանզի ունին զերիս վանս, յորս են հարիւրաւոր կրօնաւորք. և զհամարումն զոր ունին, ոչ ոք ի կրօնից ունի։ Գրեթէ բովանդակ դպրատունքն մեծամեծք, ընդ իշխանութեամբ սոցա են. և մանկունքն ուսանօղք բիւրաւորք են. և յորժամ ելանեն ի դպրատանց, իբրև զմեղու ի բեթագաց ելանեն խուռն բազմութեամբ։ Փատրի Ֆրանց մի գոյ աստ ճիզվիթ... այր հմուտ յամենայն մակացութիւնս. խոստովանահայր է թագուհւոյն և խորհրդակից ծածուկ կայսեր. վերակացու է թագաւորական դպրատանն. և սորա խնդրուածովքն թագուհին չինեալ է զայն ահագին դպրատունն ի հիմանց, յորում ամենայն արհեստք և գործիք աստեղաբաշխութեան և մաթէմաթ[ի]գայից փայլին. զոր ինչ և կամի կարէ յառաջացուցանել...։ Եթէ զքաղաքէն հարցանել կամիցիք, յիրաւի քաղաք մի է ազատ և անվտանգ, զի որ ձեռն արկանէ ի սուր, հատանեն իրաւամբ զձեռս նորա. ուստի ոչ ինչ երկիւղ գոյ սրոյ և մահուան. գիշեր ցերեկ հաւասարապէս արք և կանայք շրջին ի փողոցի աներկիւղ։ Լի են եկեղեցիք յամենայն ժամ ժողովրդօք, և ջերմեռանդութիւն նոցա նմանէ ջերմեռանդութեանն գաղատացւոց։ Եւ ունին յոյժ սաստիկ ջերմեռանդութիւն արտաքսական. ապարանք բազումք են ի քաղաքիս մեծակառոյց. բովանդակքն փատուայու քարով և ստուգայով և ծեփով չինեալ. ըստ արտաքին երևութին յոյժ փառազարդք են և հոյակապք բայց ոչ նմանք Վէնէտիկուն. այլ մանաւանդ նմանք են տօլոյու և նովէնթայու մէջ եղած ապարանից։ Ունի զեկեղեցիս փառաւորս և ոսկէզօծս և մեծամեծս, բայց ոչ բազում որպէս Վէնէտիկունն, և ոչ մարմարոնեայ այնչափ, որչափ